5. Եկամտային հարկ (Տեշարեդ)։

6. Հաղորդակցութեան միջոցների պահպանութեան հարկ (իւրաքանչիւր տունը 5 պիաստր)։

Բացի այս հարկերից, կարելի է անուանել և մի շարք ուրիշ տուրքեր, ինչպէս են՝ ամուսնութեան տուրք, ծննդեան տուրք, սեփականութիւնը վաճառելու տուրք, ժառանգութեան տուրք և այլն։

(շարունակելի) Հ. Մուսայէլեան

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հայագիտութիւնն արևմտեան Եւրոպայում. Համառօտ տեսութիւն և դրացուցակ։ Պ. Կ. Կոստանեանցի այս գիրքը կազմուած է ա–հբ. Ներածութիւնից և հեղինակների ցանկից ու դրացուցակից 1—182 երես։ Գինն է 1 ռ.

Ներածութեան մէջ պ. Կոստանեանը տալիս է համառօտ տեղեկութիւններ Կիլիկիա և Հայաստան ճանապարհորդած, հայագիտութեամբ պարապած Եւրոպացիների մասին 11-րդ դարից սկսած մինչև 19-րդ դարը, մէջ բերելով այդ Եւրոպացիների վարկումները մեր ազգի, մեր լեզուի և երկրի վերաբերութեամբ։

Եւրոպացիների ճանապարհը դէպի մեր երկիրը բացւում է խաչակրաց արշաւանքներով։ Այդ արշաւանքներին որքան դժկամակ էին Բիւզանդական կայսրները, այնքան յօժարակամ՝ Կիլիկիայի հայ իշխանները. բարեկամական յարաբերութիւնը աւելի ևս սերտացաւ, երբ հայ իշխանները ամուսնական կապերով կապուեցին Կիլիկիայի շրջակայ երկրներում ապրող Եւրոպացի իշխանական տների հետ։ Կիլիկիայի Ռուբինեան հարստութեան վերջին թագաւորները արդէն կիսաեւրոպացի կիսակաթոլիկ Լուսինեաններն էին։ Եւ արքունիքում տիրում էր Եւրոպական կարգ ու սարք. պաշտօնեաների տիտղոսները, ինչպէս մարաջախտ, գունդստապլ և այն. առնուած էին Եւրոպացիներից։

Կիլիկիայից յետոյ Եւրոպացիք սկսեցին իրանց ճանապարհորդութիւնը դէպի արևելք Հայաստանի միջով. այդ ճանապարհորդների տպաւորութիւնը մեր երկրի և մեր ժողովրդի մասին առանց բացառութեան ոչ միայն նպաստաւոր այլ և համակրական են։

Այդպիսի համակրական արտայայտութիւններից մէկն էլ ներածութեան մակդիրն է. առնուած Տուրնեֆորից, «Հայերն աշխարհիս լաւագոյն մարդիկն են»։ Որքան ուղիղ է Տուրնեֆորի այդ կարծիքը, մենք հայերս շատ լաւ գիտենք։

Բացի ճանապարհորդներից Հայաստան այցելել են կաթոլիկ քարոզիչներ, որոնք բուն դնելով Նախիջևանի գաւառի՝ Բանանիար և Քռնա գիւղերում, արդէն մահմեդական բարբարոս բռնապետների ծանր հարստահարութիւնների տակ հեծող ժողովրդի վիճակը աւելի ևս դժուարացնում էին կրօնական հողի վերայ ներքին երկպառակութիւններով ու կռիւներով։ 1576—1612 թիւ Հայաստան ճանապարհորդող Գէորգ Տէկտանդէր տեսել է Էջմիածինը անշուք դրութեան մէջ. տաճարն ունեցել է մի գմբէթ, որի մէջտեղը կար մի կլոր լուսամուտ, եկեղեցին չէ ունեցել պատկերներ, չէ եղել և զանգակ։— Անշուշտ գմբէթի այդ կլոր լուսամուտը կազմուել է գըմբէթի վերարի խոնարհուած լինելուց, որ յետոյ, Մովսէս Խորենացու օրով վերաշինուեց գմբէթի լուսամուտների տակի քիւից սկսած՝ այժմեան ձևով։

Տէկտանդէրից քիչ յետոյ 1631 թուին այցելեց Էջմիածինը Ժան–Բատիստ Տաւէրնիէ. սա արդէն գտնում է տաճարը վերին աստիճանի շքեղութեան մէջ. նա ասում է. «քրիստոնէական աշխարհի ոչ մի եկեղեցում ներկայիս այնպիսի զարդեր չկան, ինչ որ այստեղ կար»։

Պ. Կոստանեանը Եւրոպացի ճանապարհորդների և հայագէտների կարծիքները հայերի և հայ լեզուի մասին ամփոփելով՝ իւր ներածութիւնը վերջացնում է ժիլ զօրապետի 50 տարի առաջ արած հետևեալ բացագանչութեամբ։

«Հայաստան, մեծ անուն, մեծ յիշատակ անցեալ ժամանակների, մեծ տարր մի նոր ապագայի։ Ո՞ գիտէ թէ յիսուն տարուայ մէջ ինչ լինելու է այդ երկիրն, ուր օր աւուր աճում է հայ ազգը, սերունդ տոկուն և լի ապագայով»։—Նոր ապագան նախանձելի կը լինէր, եթէ չէին եղել տաճկական բռնապետութեան պարբերական հարստահարութիւնները, կոտորածներն ու դրանց հետեւանք գաղթականութիւնը։

Ներածութիւնից յետոյ գալիս է գրացուցակն, ու ճանապարհորդների այբբենական ցանկը։

Նրանց, որոնք հետաքրքրւում են հայի անցեալով ու ներկայով, յանձնարարում ենք ունենալ պ. Կ. Կոստանեանի այդ գրացուցակը։

ԿԱՐԵՒՈՐ

Եյսկի Մարգարէ աւագ քահանայ Սուքիասեանը հանգանակել և ուղարկել է Սինոդին յօգուտ Ադանայի հայ արկածեալներին 28 ռ.։ Սինոդի հրամանով տպում ենք նուիրատուների ցուցակը գոհունակութիւն յայտնելով նուիրատուներին, որք են.

1.	Տիգրանակերտցի Յակոբ Յովհաննիսեան Ապահունի	2 ռ.
2.	Դիւլբիքէ Էմմանուէլեան Մահտեսեանց	3 ռ.
3.	Կարապետ Մկրտչեան Աճեմեանց .	1 ռ.
4.	Գէորգ Ղազարեան Տոխեանց . .	1 ռ.
5.	Ռափայէլ Գաբրիէլեանց . . .	1 ռ.
6.	Մանուկ Միքայէլեան Զեբանեանց . .	1 ռ.
7.	Գէորգ Թքեճեան	50 կ.
8.	Միքայէլ Կամենշչիկեան . . .	2 ռ.
9.	Տիգրան Քարհանեանց	50 կ.
10.	Յակոբ Սարգսեանց	1 ռ.
11.	Երեսփոխան Միքայէլ Սարգսեան Համբարձումեանց	1 ռ.
12.	Տրդատ Զիթեան	50 կ.
	փոխադրելի	14 ռ. 50 կ.